Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԲԱԳՐԱՏ ԲԱԴԱԼՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
  Բագրատ Բադալյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
  ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
  Բելգիայի Թագավորություն՝ քաղաք Բրյուսել:
  2018 թվականի հունիսի 20-ից 22-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
  Եվրոպական Հանձնաժողով

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
  Մասնակցություն ՀՀ-ԵՄ Գործընկերության խորհրդի անդրանիկ նիստին

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2017թ. նոյեմբերի 24-ին ստորագրված և միջանկյալ կիրառման մեջ մտած 2018թ. հունիսի 1-ին ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ) շրջանակներում 2018թ. հունիսի 21-ին կայացել է ՀՀ-ԵՄ գործընկերության խորհրդի անդրանիկ նիստը: Խորհուրդը ստեղծվել է ՀԸԳՀ շրջանակներում և վերջինիս նպատակը Համաձայնագրի դրույթների կատարման վերահսկումն ու փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկումն է:

Խորհուրդը նախագահում էր ԵՄ արտաքին հարաբերությունների և անվտանգության հարցերով բարձր հանձնակատար Ֆեդերիկա Մոգերինին, հայաստանյան պատվիրակության ղեկավարն էր արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը:

Անդրանիկ նիստի շրջանակներում երկու կողմերը իրենց պատրաստակամությունն հայտնեցին Արևելյան գործընկերության և վերանայված Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում ընդլայնել և խորացնել փոխադարձ համագործակցությունը:

Հանդիպման օրակարգի առաջին մասով անդրադարձ կատարվեց քաղաքական երկխոսության, բարեփոխումների, ժողովրդավարության, իրավունքի գերակայության, ԶԼՄ-ների ազատության և մարդու իրավունքների թեմաներին, որոնց քննարկման ընթացքում ԵՄ կողմը ողջունեց ՀՀ նոր կառավարության կողմից կոռուպցիայի դեմ ուղղված հստակ գործողությունները և վերահաստատեց իր աջակցությունը բարեփոխումներին, այդ թվում տեխնիկական և ֆինանսական օժանդակության տեսքով: Նաև անդրադարձ կատարվեց Լեռնային Ղաևաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման հարցում, ինչպես նաև տարածաշրջանային խնդիրների հետ կապված հարցերում ԵՄ աջակցությանը:

Հանդիպման շրջանակներում քննարկվեց Հայաստանի վերաբերյալ հունիսի 6-ին հրապարակված Եվրոպական հարևանության քաղաքականության երկրների զեկույցը և կարևորեց 2017 թվականի մայիսին Հայաստան-Եվրամիություն համագործակցության խորհրդից ի վեր ԵՄ-Հայաստան հարաբերություններում արձանագրված առաջընթացը:

Հանդիպման ընթացքում ընդգծվեց առևտրի ոլորտում Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի դրույթների հետագա կատարման անհրաժեշտությունը՝ Հայաստանում կայուն, բիզնեսի զարգացման համար բարենպաստ և կանխատեսելի առևտրային միջավայրի ապահովման համար:

Գործընկերության խորհրդի կողմից նաև նշվեց, որ Հայաստան-Եվրամիություն Գործընկերության առաջնահերթությունները կձևավորեն Հայաստանին ԵՄ աջակցության գերակայությունները:

Տրանսպորտային ոլորտում Գործընկերության խորհուրդն ակնկալում է 2017թ. նոյեմբերի 24-ին նախաստորագրված Հայաստան-Եվրամիութուն համապարփակ օդային փոխադրամիջոցների մասին համաձայնագրի ստորագրում, ինչը կբարելավի շուկայի հասանելիությունը և կնպաստի անվտանգության, բնապահպանության և սոցիալական առավելագույն չափանիշների ապահովմանը:

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Բագրատ Բաղալյանը հանդես եկավ ելույթով, որով կարևորվեց տրանսպորտային

ենթակառուցվածքների առաջնային ծրագրերում TEN-T ցանցերի ընդլայնումն ու կատարելագործումը: Նշվեց, որ միջազգային ֆինանսական հաստատությունների և պետական բյուջեի միջոցները կենտրոնացված են այդ գործողությունների վրա: Նախարարի տեղակալի կողմից հակիրճ ներկայացվեց ներկայումս իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի և Մ6 ճանապարհի վերակառուցման և բարելավման ծրագրերը, որոնք ֆինանսավորվում են Եվրոպական ներդրումային բանկի և Ասիական զարգացման բանկի կողմից:

Նշվեցին նաև TEN-T ցանցերի զարգացման համար կատարվող աշխատանքները, որոնք ուղղված են մասնավոր սեկտորից և հանրային մասնավոր գործընկերության միջոցով նոր ֆինանսավորման աղբյուրների ներգրավման հարցում:

Ելույթում անդրադարձ կատարվեց նաև Ճանապարհային անվտանգության գործողությունների ծրագրի նախագծմանն ու ընդունմանը, ինչպես նաև ճանապարհային անվտանգության խնդիրների նույնականացմանը և դրանց համապատասխան լուծումների մշակմանը:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**